ՆՈՐ-ԴԱՐ

№ 107 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 19 Յունիսի 1898 Ուրբաթ, 19 Յունիսի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 107

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., համար 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Անգլիացին ամեն տեղ որոնում է իւր շահերը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Թեհրանից։
Մեր բժիշկները և ժողովուրդը։
Թղթակցութիւններ.— Նոր-Նախիջևան։ Դուրա։ Նամակ Պարսկաստանից։
Քաղաքական.— Աւստրիա։ Կրետէ։ Թիւրքիա։ Սպանիա-ամերիկական պատերազմը։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Թեր և դէմ։
Բանասիրական.— Յուդայի վերջին գիշերը։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 18 յունիսի 1898 թ.

ԱՆԳԼԻԱՑԻՆ ԱՄԵՆ ՏԵՂ ՈՐՈՆՈՒՄ Է ԻՒՐ ՇԱՀԵՐԸ

Անգլիացին ամեն տեղ որոնում է իւր շահերը. սա ամենքին յայտնի ճշմարտութիւն է։ Անգլիացին անում է այն, ինչ որ ամեն մարդ կ'անէր։ Անգլիացու վրայ ուշադրութիւն են դարձնում, այդ մասին խօսում են, որովհետև նա մեծ ճարպկութեամբ է որոնում իւր շահերը, և որ գլխաւորն է, մեծ յաջողութեամբ։

Ֆրանսիացիները այդ կողմից ընդունակ չեն մրցելու անգլիացիների հետ. իրենց անշնորհք քաղաքականութեան շնորհիւ՝ իրենք ֆրանսիացիները ձեռքից բաց թողին Եգիպտոսը. Անգլիան տիրացաւ Եգիպտոսին և Սուեզեան ջրանցքին, որ ֆրանսիացու մտքի ծնունդ էր և գլուխ բերած գործ։ Ֆրանսիացիներն իրենց սխալը հասկանալով, ահա քանի տարի է աշխատում են Եգիպտոսից դուրս հանել անգլիացիներին. բայց ո՞վ է դուրս գընացողը։

Մինչև օրս էլ Անգլիան հանգիստ նստած է Եգիպտոսում և դեռ արշաւում է Եգիպտոսից դէպի հարաւ։ Ասացին որ Անգլիան առանձնացած է. Ամերիկան խորխտայ Անգլիայի դէմ, ևքիչ էր մնացել, որ պատերազմ սկսի, բայց Ամերիկան կարողացաւ պատերազմ սկսել... Սպանիայի դէմ, իրեն օգնական ունենալով Կուբայի ապստամբներին։

Անգլիայի քաղաքագէտներից շատերը դժգոհ են Սոլսբըրիի զգոյշ քաղաքականութիւնից և գանգատւում են, որ նա իւր թուլութեամբը և չափազանց ըզգուշութեամբը, միւս մեծ պետութիւնների հետ համեմատած, յետ մնաց Չինաստանից օգուտ քաղելու գործում։

Բայց այդ մի խորամանկ քաղաքականութիւն է. Անգլիան անհամեմատ աւելի մեծ իրաւունքներ և արտօնութիւններ է ձեռք բերել Չինաստանում և իւր շահերը աւելի մեծ չափով է ապահովել այդ ահագին կայսրութեան մէջ։

Այն ժամանակ, որ եւրոպացիների ուշադրութիւնը դարձրած էր Չինաստանի և այդ երկիրը շահագործելու վրայ, Անգլիան կամաց կամաց իւր նաւատորմի համար նոր հրապարակներ է բռնում Պարսկաստանում և այդ երկիրը ամբողջապէս իւր զօրաւոր ազդեցութեան է ենթարկում։

Մի գերմանական թերթի Լոնդոնի թղթակիցը այդ մասին գրում է.

«Պարսկաստանում գոյութիւն ունեցող անգլիական բանկային հաստատութիւնը քանիցս մանր ծառայութիւններ է մատուցել շահին՝ երբեմնակի գումարներ փոխ տալով նրան։ Վերջերս շահը 50 հազար ֆունտ ստերլինգ վերցնելու կարիք էր զգում։ Բանկը այդ գործը քննելով, այս անգամ էլ համաձայնուեց կատարելու շահի ցանկութիւնը, բայց միայն այն պայմանով, որ այդ պարտքի վճարման ապահովութեան համար յանձնուէր բանկին Բուշիրի (Պարսից ծոցում) մաքսատան կառավարութիւնը։ Եւ այսպէս, մայիսի սկզբից այդ պարսկական ամենանշանաւոր մաքսատան վարչութիւնը անցել է Չերչիլ անունով անգլիացու ձեռքը, որ երբեմն ծառայում էր Բուշիրի անգլիական բանկի բաժանմունքում։ Բացի Բուշիրից այժմս անգլիացիների ձեռքն է անցել Քերման-Շահի պարսկական մաքսատունը, որ գտնւում թիւրքական սահմանի վրայ։ Անգլիացիները հաշւում են, որ իրենց ձեռքը կանցնի շուտով Շիրազի, Բենդեր-Աբասի, Լինգէ և Շատ-էլ-Արաբի մաքսատները։ Ինչպէս երևում է անգլիացիները իրենց ձեռքն են ուզում ձգել Պարսկաստանի մաքսատների բոլոր վարչութիւնը»։

Այսպիսով անգլիացիները ամենաապահով ճանապարհն են ընտրել, ոչ միայն իրենց առևտրական շահերը ապահովելու, այլ և իրենց քաղաքական գերիշխանութեան ենթարկելու ասիական երկիրը, որի անունը մեծ է, բայց ինքը շատ փոքր և աննշան երկու պետութիւն։

ՔՐՈՆԻԿՈՆ

Գեր. Եսայի արք-եպիսկոպոս Աստուածատրեանը և արժ. Յուսիկ վարդապետ Մովսիսեանը Բարձրագոյն հաստատուած են Ս. Էջմիածնի սինոդի անդամ։

—

Ի Տէր հանգուցեալ ազատարար Աղէքսանդր II-ի յիշատակին Մոսկւայում, սոյն օգոստոսի 14-ին, հանդիսաւոր կերպով տեղի է ունենալու նրա արձանի բացումը։ Այդ առթիւ Կովկասի քաղաքներից էլ ներկայացուցիչներ են գնալու դանազան գաւառներից։

—

Թիֆլիզի նախկին նահանգապետ իշխ. Ճիրվաշիձէն իւր 1895 թ. ամենահպատակօրէն տուած հաշուի մէջ, ի միջի այլոց, յիշել էր թէ կատարելագործուած երկրագործական գործիքների բացակայութեան և թանկութեան պատճառով գիւղատնտեսութիւնը խիստ վնասներ է կրում։ Ներկայումս երկրագործութեան դեպարտամենտը դիմել է Կովկասի գլխաւորապետական ընկերութեան խորհրդին և առաջարկել, որ ընկերութեան կից հիմնուի երկրագ. կատարելագործուած գործիքների ու մեքենաների պահեստ։

—

Հանքային դեպարտամենտը մտադիր է մի քանի մասնագիտական խմբեր ուղարկել՝ ամեն կողմից ուսումնասիրելու Կովկասի լեռների սեխակներն ու հանքային հարստութիւնները։

—

Հիւսիսային Կովկասը հարաւայինի հետ միացնելու համար Պետրովսկ-Բագուի երկաթուղու գծի աշխատանքները յաջողութեամբ առաջ են գնում. «Կասպի»-ի ասելով արդէն ձեռնարկել են գծի երկարութեամբ կայարանների, պահապանների տների, կամուրջների և այլ շինութեանց։ Ընդհանուր աշխատանքի գումարը հասել է 3 միլլոն րուբլուց աւելի, բացի այդ, պատրաստւած է երկաթուղու շարժական մասը պատրաստել, որը կը նստի 4 միլլոն րուբլի։

—

Յայտնի է, որ Կովկասում մեղուաբոյծների համագումար ժողով է տեղի ունենալու։ Դրա հետ միաժամանակ երկրագործութեան մինիստրը, ներքին գործերի մինիստրի համաձայնութեամբ, Կովկասի այգեգործական ընկերութեանը թոյլ է տուել մի ուրիշ համագումար կազմելու այգիների բերքերի համար։

—

Թիֆլիսում բացուելիք ժողովրդական թատրոնի օգտին եղած նուէրները հասնում են 6000 րուբլու։ Քաղաքային վարչութիւնը թատրոնի շինութեան հարցը բարձրագոյն իրաւասուների հետ խորհրդակցում է՝ քաղաքային հողի վրայ շինութիւնը կառուցանելու համար՝ մի յարմարաւոր տեղ նշանակելու մասին։

—

Շրջանառութեան մէջ մտած լինելով կէսօ իմպերիալներ (15 ր. ոսկի), պետական բանկը բացատրել է, թէ այդ կէսօ դրամները շատ կարելի է ճանաչել վրայի 1895 և 1896 թուով, քանի որ պետական գանձարաններից դուրս թողնուած կլում է միայն 1897 թիւը։

—

Մեզ խնդրում են հրատարակել հետևեալը. «Կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի կոյրերի խնամատար ընկերութեան կովկասեան ճիւղի խորհուրդը պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1898 թ. մայիսի 1-ին ճիւղի դրամարկղում կար 50,931 ր. 21 կոպ., մայիս ամսւայ ընթացքում մտաք եղել է 14,923 ր. 78 կ., նոյն ժամանակամիջոցում ծախսուած է 17,493 ր. 32 կ.,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՒԴԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

(Լ. Հերհարտի)

—

Յուդան երկար անշարժ կանգնած էր այնտեղ, ուր մահացու համբոյրը տուաւ Յիսուսին։ Նա հայեացքով հետևում էր այն խմբին, որը Մարդոյ Որդուն քաշքըշելով տանում էր դէպի Երուսաղէմ։ Լապտերների և կերոնների արփիներին լուսոյ հետ միասին անէքերով ու մերկացրած սրերով այդ տխուր թափորը լուռ և շատ անհետացաւ հեռւում... Նա անհետանում էր և անհետացաւ, որպէս գիշերային աւազակների հրոսակ։ Այն ժամանակ Յուդան հանդարտութեամբ փաթաթուեցաւ իւր վերարկուի մէջ և երեսը դարձնելով դէպի քաղաք՝ սպասում էր։

Կէս գիշերից անց էր։ Լուսինն իւր կապոյտ լոյսով լուսաւորում էր անբերրի դաշտերը, քաղաքի աշտարակներն ու ամրութիւնները։ Մի խառն և ահարկու աղաղակ բարձրանում էր վեր և դէպի տաճարի հրապարակը։ Անդադար հընչում էին բուերի չարագուշակ ձայները։ Մի ահագին չղջիկ իւր պաղ թևով դիպաւ Յուդայի այտերին։ Նա երեսը ծածկեց վերարկուի փեշի մէջ։

Նա տակաւին սպասում էր։ Բայց ահա յանկարծ ուրախութիւնից յուզուած՝ նա երեսը դարձրեց դէպի այգու մուտքը, դուրս եկաւ ստուերից և վազեց ընդառաջել մի մարդու, որը, կարծես, Գեթսեմանի խաւարի մէջ որոնում էր մէկին։ Դա մի ծերունի հրեայ էր, երկար սպիտակ մօրուքով. կորացած մէջքով, յենուած փայտին։ դա քահանայապետի գանձապահն էր, որ անհաստատ քայլերով առաջ էր գալիս։ Յուդան մօտեցաւ նրան։ Գանձապահը շպրտեց դէպի Յուդան մի կաշուէ քսակ և ապա արագ քայլերով հեռացաւ նրանից։

—Նոյն իսկ սպիղծ շան առաջը ոսկորն աւելի քաղաքավարի են գցում, ինքն իրեն մրթմրթաց Յուդան։

Նա վեր առաւ քսակը և ժպտաց։ Քըսակը ծանր էր և փողերի զնգզնգոցը շատ քաղցր ու տխարժելի էր հնչում նրա ականջին։ Յուդան դուրս վազեց մացառներից և քսակը բաց արաւ լուսնի լուսոյ առաջ։ Առաջին իսկ վայրկեանին արծաթի փայլը կարծես կուրացրեց նրան։ Բայց շուտով ձեռք զարկեց համարել փողերը, նրանց խրաքանչիւրի կշիռը փորձում էր իւր աջ ձեռքի բռան վրայ և երկար անհանգստութեամբ նայում էր մի հատ դրամի, որի վրայ կայսեր պատկերը փոքր ինչ եղծուած էր։

—Սա Օգոստոսինն է, ասաց նա, հանգուցեալ կայսերը։ Ես գերադասում եմ ուրիշ դրամներից Տիբերիոսինը, նրանք բոլորովին նոր են. քահանաներն իրենց խոստումը կատարեցին։ Այդ լաւ է։

Նա թագցրեց քսակը գօտու մէջ և ուղևորուեց դէպի Երուսաղէմ։ Նա իրեն թեթև էր զգում, նա իրեն երջանիկ էր համարում։ Խիղճը հանգստացնելու համար նա սկսեց մտաբերել մասնաւոր թեան գիշերը Կայիափայի տուած ննջաւոր յորդորները։ Չէ՞ որ նա մտնել էր այն մարգարէին, որը նախապաշարել էր օրէնքի կործանումը և արհամարհել էր Մովսէսին. չէ՞ որ մտնել էր Խորայէլի սուտ թագաւորին, կեղծ-մեսիային, որն արտաքսում էր վաճառականներին Սողոմոնի տաճարից և փակում էր երկրի արքայութիւնը հարուստների առաջ։ Նա, այդ պարկեշտ Իսկարիովտացին փառաւոր կերպով վրէժխնդիր եղաւ և՛ Աստուծոյ, և՛ Դաւթի, և՛ Հռովմի փոխարէն։ Եւ հէնց այն միևնոյն օրը, երբ տեղի կունենար Քրիստոսի չարչարանքը, Աստուծոյ ընտրեալները՝ դեսպանք, սադուկեցիք, դպիրները, փարիսեցիները և Պիղատոսը, կայսեր այդ հըպարտ փոխանորդը, պիտի շնորհաւորէին և փառաբանէին նրան իւր կատարած սխրագործութեան համար։

***

Նա մտաւ խաղաղ և մեռելապատ քաղաքը. մտածելով որ հէնց այդ ժամին Կայիափան հարց ու փորձ է անում Յիսուսին, նա ուղևորուեց դէպի քահանայապետի ապարանքը։ Հեռուից նա նըշմարեց լուսաւորուած պատուհաններ. ճեմելիքների վրայ սինեդրոնի պաշըտօնի երկայնութեամբ յետ ու առաջ շարժւում էին ստուերներ։ Առաջին բակի վրայ մի կարմրագոյն լոյս էր երևում։ Փողոցը ամայացած էր։ Հաւը խօսեցաւ։

—Մօտ է լուսաբացը, ասաց Յուդան։

Նա կանգ առաւ դռների առաջ։ Բակի մէջ տեղում բորբոքւում էր խարոյկը։ Յիսուսի տասներկու աշակերտներից մինը՝ Պետրոսը նստած էր նստարանի վըրայ և տաքացնում էր ձեռքերը՝ խօսակցելով մի դռնապան աղախնու հետ։ Ըստ երևոյթին՝ Պետրոսը սաստիկ յուզուած էր ու դժբաղդ էր։ Նա խօսում էր բարձր և ասաց դռնապան օրիորդին.

—Աշխարհիս, երդւում եմ, ո՛չ, ես այդ մարդուն չեմ ճանաչում։

Հաւը կրկին խօսեցաւ։

Աղախինը գնաց։ Պետրոսը լռեց և խորասուզուեց տխուր մտածութեան մէջ։ Նա չնկատեց, թէ Յուդան ինչպէս մօտեցաւ խարոյկին։ Կայիափայի ժողովարանից խուլ աղաղակ էր լսւում, որն ընդհատւում էր լռութեան երկար ընդմիջումներով։ Մերթ լսւում էին սպառնալից և արհամարհական ձայնի հնչիւններ, մերթ լուրջ ու համառօտ ճառախօսութիւններ, որոնք հարկադրում էին Գալիլէայի ձկնորսին և՛ սարսափել, և՛ մանկան պէս լալ. նա մտածում էր, որ բակում ինքը մենակ է։

Եւ ահա երրորդ անգամ հաւը խօսեցաւ։

Պետրոսը սարսեց, մի դառնութիւն ձայն արձակեց, գլուխը բարձրացրեց և կանգնեց։ Եւ երկու ատամները՝ արցունքոտ ու մաշուած, յանկարծ դէմ առ դէմ եկան իրար։ Բայց Պետրոսի հայեացքն այնքան զարհուրելի էր, նա այնքան վճռողաբար բռնել էր սուրը, որ Յուդան երկիւղից դողալով՝ յետ քաշուեց դէպի քահանայապետի դուռը։

Երկար թափառում էր Յուդան տաճարի շուրջը, որի շրջապատը բացւում էր միայն արևածագին։ Նա հէնց այժմ կամեցաւ շինութեան որմաքին սրահում ընտրել իւր համար մի տեղ, ուր նա կըրանար սակէվաճառի խանութը։ Քահանաներն, ի հարկէ, նրան յարմար տեղ կըտային, և շուտով Եգիպտոսի, Յունաստանի, Իտալիայի և Ասիայի զեղեցիկ դրամներն իւր ձեռքերի մէջ պիտի խաղացնէր։ Այն ժամանակ նա պէտք է ծիծաղէր այս քաղցած թափառականների՝ աղքատութեան և ապաշխարութեան այս սիրահարների վրայ, իւր վաղեմի աղքատ ընկերակիցների վրայ, այն մարդու աշակերտների վրայ, որը պէտք է մեռնէր։ Արդէն մի քանի գնացողներ, Ոաբբու հսկողութեամբ, բաց արին տաճարի վանդակները։ Յուդան մօտեցաւ

ուրեմն առ 1-ն յունիսի մնում է 48,361 ռուբ. 67 կ.: Այդ գումարից գտնւում է՝ ա) ընթացիկ հաշւով պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքում—24,212 ռուբ. 66 կ., բ) նոյն բանկի բաժանմունքի խնայողական գանձարանում—1,926 ր. 78 կ., գ) տոկոսաբեր թղթերով ի պահեստ նոյն տեղում—22,105 ր. 13 կ. և դ) առ ձեռն դրամ ճիւղի արկղում—117 ր. 10 կոպէկ:

Ճիւղի ակնաբուժարանում 1898 թ. մայիսին նոր հիւանդ եղել է 557 հոգի, որ հների հետ միասին այցելել են 2954 անգամ. նոյն ժամանակամիջոցում 72 անդամատութիւն է եղել»:

—

Յունիսի 18 ին կոյրերի ուսումնարանի սաները Սուրամ գնացին ամառն անցկացնելու համար:

—

Թիֆլիսի 8-րդ քաղաքամասի (Զուգուբէթի) պրիստաւ կապիտան Սամոսի նախաձեռնութեամբ նոյն քաղաքամասի ոստիկանական պաշտօնեաները իրեն պրիստաւի կաբինետում բազմեցրել են Նիկողայոս Սքանչելագործի պատկերը, որի առաջ անշէջ կանթեղ է վառւում: Պատկերը դրուած է ռուսական ոճի ձևով շինուած մի փոքրիկ մատրան մէջ, որի տակն ամրացրած մի տախտակի վրայ գրուած է այն անձերի ազգանունները, որոնք մասնակցել են այդ սուրբ պատկերը պրիստաւի կաբինետում (ոստիկանատանը) բազմեցնելուն: Ամեն տարի, դեկտեմբերի 6-ին, մաղթանք է կատարւում այդ պատկերի առաջ:

——

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԹԵՀՐԱՆԻՑ. — Էմինէ-Դովլէն յունիսի 6-ին (ն.տ.) զրկուեց մինիստրական և ուրիշ շատ պաշտօններից: Ֆինանսների մինիստրի պաշտօնը յանձնուեց պաշտօնազուրկ Էմինէ-Մուլքին: Վեհ. Շահը պատուիրել է նախկին առաջին-մինիստրը Սադրազամին յետ կանչել Շահ-Աբդուլ-Ազիմից. հաւատացնում են, որ նախկին պաշտօնն իրեն պիտի յանձնուի: Ժողովուրդը շատ ուրախ է այս անտակընկալ փոփոխութիւնների համար:

ՄԵՐ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

—

Որ բժիշկները պաշտօնով հասարակական գործիչներ են, սա պարզ է. ուրեմն նրանց գործունէութիւնը պէտք է կենդրոնանայ ժողովրդի առողջապահութեան վրայ: Բայց այդպէ՞ս է, արդեօ՞ք այդ ըմբռնումը ամբողջ ծաւալով մուտք գործե՞լ է իրականութեան մէջ:

Այստեղ ժողովուրդ ասելով մենք հասկանում ենք մեծամասնութիւնը. հարուստ և ունևոր դասակարգի մասին, որ կազմում է փոքրամասնութիւնը, չենք խօսում. նրանք, շնորհիւ իրենց կարողութեան, լիապէս օգտւում են բժշկական միջոցներից, բայց դրա համար ըրանք վարձատրում են աւելի, քան պէտք է վարձատրէին: Իսկ ինչ վերաբերում է ահագին մեծամասնութեան, որի մէջի գործունէութեամբ և պէտք է որոշուի բժիշկների պարտաճանաչութեան աստիճանը, նա շատ քիչ է օգտւում բժշկականութիւնից. այսպէս, մենք գտնում ենք, որ բժշկականութիւնը մեր ժողովրդի նկատմամբ իւր կոչման բարձրութեան վրայ չի կանգնած:

Վերցնենք դրա ապացուցութեան համար գաւառները, ուր ժողովուրդը բնակւում է աւելի մեծ քանակութեամբ, քան մեծ քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքւում ևայլն:

Ինչ է նկատւում այդ տեղերում. այդ իմանալու համար նախ պէտք է իմանալ, թէ ժողովուրդն ինչպէս է վերաբերւում դէպի բժշկականութիւնը: Նա համարեա թէ չի հաւատում բժշկականութեանը: Այս փաստը բաւական է ցոյց տալու, որ մեր բժիշկները ժողովրդին շատ աննշան օգուտ են տալիս: Գուցէ շատերն ասարկեն, որ այդ վերաբերմունքը ժողովրդի ագիտութեան արդիւնք է,—չենք ժխտում, մասամբ գործ ունի և տգիտութիւնը, բայց դա գլխաւոր պատճառը չէ. դա ծագում է այն չափազանցրած հասկացողութիւնից, որ ունինք կազմած ժողովրդի մասին. միթէ կարծում ենք, թէ ժողովուրդը բոլորովին անընդունակ է գնահատել քաղաքակրթութեան արդիւնքները. դա սխալ է, ժողովուրդը, հէնց որ տեսաւ մի բանի օգտակարութիւն, սկսում է հետզհետէ կպչել այդ բանին, սիրել. համոզուելու համար վերցրէք նրա մասնաւոր կեանքը և կամ նրա այն յափշտակութիւնը, որով նա վերաբերւում է դէպի իւր բարերարները, ժողովուրդը երախտապէտ է և դա երեւում է ինչպէս նրա ներկայ ընդհանուր և մասնաւոր կեանքում, նոյնպէս և ժողովրդի գրականութեան մէջ. ամեն տեղ ժողովուրդը գիտէ, եթէ ոչ ճշտապէս՝ գոնէ մեծ չափով, գնահատել իրեն օգուտ տուող ոյժերը: Եթէ բժշկականութիւնը իւր գործադրութեամբ օգուտ տուած լինէր ժողովրդին, նա չէր բացասել այդ գիտութիւնը: Մի ապացոյցն էլ այն է, որ լաւ բժիշկները միշտ յարգանք են վայելում ժողովրդից. բայց դրանք հազուագիւտ են, դրանց պէտք է լոյսով որոնենք, որ տեղ-տեղ գտնենք:

Բժիշկների անգործունէութեան հետևանքը այն է լինում, որ գաւառներում առաջ են գալիս հիւանդութիւններ, տարածւում են ժողովրդի բոլոր խաւերի մէջ և մէկ-մէկ խեղդում են նրա անդամներին. բժիշկներն ընդհանրապէս կամ չեն իմանում այդ հիւանդութիւնների մասին, որովհետև նրանք իրենց դաւթարից դուրս են համարում ժողովրդական առողջութեանը հետևելը, կամ եթէ այդ դժբաղդութիւնների ձայնը հասնում է նրանց՝ նրանք անտարբերութեամբ են վերաբերւում: Ի՞նչ պէտք է անէին նրանք. նրանք պէտք է ամբողջ ոյժերով դիմադրէին և եթէ ոյժի պակասութիւն լինէր, պէտք է օգնութեան կանչէին թէ հրապարակական կոչմամբ և թէ մամուլի միջոցով հասարակութեան կարող անդամներին, ուրիշ տեղերում անգործ նստած բժիշկներին, որպէս զի այդ թշուառութիւնների առաջն առնեն:

Բայց չկայ այդ: Ժողովուրդն արդէն, մանաւանդ գիւղերում, բնական է համարում բժիշկներին չդիմելը. դրա թէ հետևանքն առհասարակ լաւ չի լինում և թէ մեծ փող է հարկաւոր դրա համար. երևակայեցէք, որ մէկը հիւանդ է և կարիք ունի բժշկի, բժիշկ մի 6—7 անգամ կանչելու համար քաղաքներում 12—15, իսկ գիւղերում 40—50 րուբլի է նստում. էլ ինչպէս օգտուին բժշկականութիւնից, քանի որ դա աւելի մեծ վնաս, քան օգուտ է պատճառում:

Բժշկականութեան անօգտակարութեամբ ժողովրդի մէջ բաւականին վնասում է բժիշկների քիչ լինելը, բայց նոյն իսկ եղածները չեն կատարում իրենց դերը. ամբողջ ցաւն հէնց սրանումն է: Այս անգործունէութեան պատճառները զըլխաւորապէս երկու են. մէկ այն, որ բըժիշկները իրենց այցելութիւնների համար շատ մեծ փող են վերցնում, և երկրորդ՝ բժիշկների անտարբերութիւնը, յոգնածութիւնն այստեղ էլ երևում է:

Բժիշկներն իրենց գործը օգտակար դարձնելու և ժողովրդի մէջ տարածելու համար պէտք է ձգտեն՝ նախ այցելութեան գինը մատչելի դարձնել և ապա սրտով, հոգով կպչել այն պաշտօնին, որի համար կանչուած են:

Ընդհանրապէս սառն վերաբերմունքը, ոգևորութեան բացակայութիւնը, որ հետևանք է բարձր ձգտումների, իդէալների չգոյութեան՝ միշտ վնասում է մարդուն թէ հասարակական ասպարէզում, և թէ մասնաւոր կեանքում: Եթէ մեր ներկայ բժշկականութիւնը, կրկնում ենք, ուզում է օգտակար դառնալ ժողովրդին, պէտք է իւր գործադրութեան եղանակի և միջոցների մէջ մտցնէ բարեփոխութիւն, հակառակ դէպքում նա կլինի ոչ ժողովրդի տառապանքները թեթևացնող մի զօրաւոր միջոց, այլ մի ձեռնածութիւն, կեղծիք, որը բացի օգուտ չտալուց, վնաս կբերայ, ժողովուրդը դրա վրայ հիմնուած՝ աւելի ևս հակառակ կլինի գիտութեանը:

Պ. Ա.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ, 9 յունիսի.— Սրանից մի քանի ամիս առաջ, երբ մի քանի յառաջադէմ անձնաւորութիւններ սկսեցին յանդիմանել մեր եկեղեցական-ազգասէր ընկերութեան հոգաբարձուներին՝ սրանց անկանոն գործունէութեան և նոյն իսկ անպարկեշտութեան համար, եղան մի քանի պարոններ, որոնք կամենալով մոլորել հասարակութիւնը, ցեխը գցեր դարձնել, որպէսզի գիշերային մթութեան մէջ անհետանայ իրենց ոտերի աբաքները —լրագրութեան միջոցով սկսեցին «հերքումներ» գրել: Զարմանալին այն է, որ այդ հերքումներ գրողը ինքը հոգաբարձութիւնը չէր, այլ մասնաւոր անձինք էին, որոնք աշխատում էին և մինչև այժմ աշխատում են արդարացնել և անմեղ ճանաչել նրանց, որոնց անպարկեշտութիւնն արդէն փաստերով է հաստատուած: Այդ հաստատել են և հաստատում են նոյն իսկ մայրաքաղաքների ռուս լրագրները, որոնց հաղորդածը մենք պէտք է ընդունենք անաչառ, քանի որ հոգաբարձութիւնը լռում է այդ մասին և ոչ մի հերքում չի գրում: «Մշակ» լրագրի թղթակից-աշխատակիցը և այժմեայ Բարեգործական Ընկերութեան նախագահ պ. Գր. Չալխուշեանը, որ խաւարի և ստութեան դէմ կռուող ամենից դասակարգին անպարկեշտ էր անւանում և խոստացել էր «այդ» հոգաբարձութեան (անկանոն) գործերի մասին մանրամասն կերպով հաղորդել լրագրին,—մինչև այժմ լուռ է և ոչ մի տող չի գրում «Մշակ»-ում: Ի՞նչ է պատճառը: Արդեօք պարոնը հասկացաւ, որ ինքը սխալւում էր պաշտպանելով անարժաններին, թէ նա տեսաւ, որ այլ ևս անկարող է նրանց պաշտպան հանդիսանալ և լռեց: Բայց ինչո՞ւ լռել, քանի որ նոյն իսկ պ. Չալխուշեանը կար ժամանակ, որ գովաբանում էր այն սկզբունքը, թէ պէտք է սեւը սեւ անուանել, սպիտակը սպիտակ:

Մի՞թէ անհասկանալի դարձաւ մեզ համար, որ անպարկեշտներին հարկաւոր է պախարակել, յանդիմանել, որ անպարկեշտութիւնը չկրկնուի գոնէ, եթէ չի կարելի բոլորովին ուղղել նորա հետևանքը: Մեր ցաւն այն է, որ մենք ինքներս չենք կարողանում հասկանալ, թէ որտեղ է մեր օգուտը և վնասը և կամ աւելի վատ, հասկանում ենք այդ, բայց չենք ուզում զանազանել օգուտը վնասից, որովհետև այդ ձեռնտու չէ մեզ համար— Հէ՛ւսալ չունինք, ինչպէս ասում են Նոր-Նախիջևանցիք:

Բայց, տեսէ՛ք, ինչ լաւ գործ արած կլինէինք, եթէ ժամանակին մենք խոհեմ կաւ չլինէինք այնքան պարոնների. գրանով մենք կկարողանայինք ազատել մի ամբողջ 100,000 ր. կարողութիւն— մի կարողութիւն, որից պէտք է օգտուէին միայն աղքատները և որը այժմ ծառայել է ով գիտէ՝ ում օգտին: Ցաւալի է, բայց իրողութիւն է, որ մեր երիտասարդներն իրենց ուսանողութեան ժամանակ փայփայած իդէալները շատ շուտով մոռանում են և ով է որ միայն մոռանային. նրանք աւելի վատ, փոխում են այդ իդէալները և անազնիւ սկզբունքների ջատագով ու պաշտպան են հանդիսանում և այդպիսով մեր կրթուած երիտասարդութիւնը դառնում է անկիրթներից էլ վնասակար: Խօսքս բացառութիւնների մասին չէ: Կան նոյնպէս և այնպիսիները և շատերը կարելի է ասել, որոնք ցոյց են տալիս միևնոյն անտարբերութիւն դէպի հասարակական գործերը, մինչդեռ կարող էին մեծամեծ օգուտներ բերել այդ գործերին՝ լինելով իրենց պարկեշտ անձնաւորութիւններ: Այդ անտարբերութիւնը հետևանք է երևի այն բանի, որ նրանք վախենում են երկպառակութիւններից: Բայց մենք խորհուրդ ենք տալիս այդ պարոններին անուշադիր չլինել խեղճերի և աղքատների ձայնին և երիտասարդական վառ

Նրանց այնպիսի հաստատ քայլերով, ժպտալով և ձեռքի այնպիսի հեզահամբոյր շարժումով, որ կարծես իւր սեփական տունն է մտնում: Բայց քահանան յօնքերը կիտեց, ձեռքը պարզեց և նրա ճանապարհը կտրելով՝ ասաց.—Կանգնի՛ր և հեռացի՛ր... Օրէնքն արգելում է անմաքուրին մտնել սուրբ յարկի տակ: Հեռացի՛ր: Այս գիշեր քեզ յանձնեցին երեսուն արծաթը՝ այն արեան գինը. քո աշխատութիւնը վարձատրուած է: Հեռացի՛ր, եթէ ո՛չ՝ ես քեզ կարտաքսեմ իբրև շնացող պոռնկի, իբրև հեթանոսի կամ իբրև մարդասպանի:

* *
*

Ցուղան հեռացաւ տաճարից: Այս անգամ նա ուղևորուեց դէպի Պիղատոսի Ատեանը: Հռովմայեցիք քահանաներից աւելի քաղցր կըվերաբերուին դէպ իրեն, նրանք կըպաշտպանեն իրեն ծերակոյտի չարամտութիւնից: Այդ բարունները մալեանդներ են, որոնց նա ուղղակի խըղճում է: Նա գիտէ, որ Ղևիի սերունդը իւր հոգւոյ խորքում չարունակում է երկըրպագել ոսկէ հորթին, ինչպէս և Մովսիսի ժամանակներումը: Երբ նրանք կը տեսնեն, թէ ինչպէս Իսկարիովտացին, փոխարքայի այդ հովանաւորեալը, կայսեր շնորհներով առատօրէն պարգեւատրուած՝ մեծամեծ հարստութիւններ ձեռք կըբերէ, իւր վաճառատները կլցնէ ոսկով և մետաքսեայ գործուածքներով, փղոսկրով, թանկագին քարերով, սափական անուշահոտութիւններով և թէ ինչպէս նա թանկ գնով կըվաճառէ այդ ամենը Հռովմի վրայ, — այն ժամանակ կը յարգեն իրեն, կըշողոքորթեն իրեն, իւրաքանչիւր օր կըծխեն նրա տաների առաջ այն խունկը, որ վերապահուած է միայն Եհովային:

Եւ ուրախացած իւր հպարտ և անյագ ցնորքներով՝ Ցուդան ամբողջ ճանապարհին իւր վստահ հայեացքներով պատասխանում էր ծերակոյտի անդամների, դպիրների և փարիսեցիների արհամարհական հետաքրքրութեանը, որոնք հեռուից մատնանիշ էին անում նրան, բայց ի մօտոյ տհաճութեամբ խոյս էին տալիս նրա ստուերից, որպէս մի պղծութիւնից: Ցուդան հրապուրուելով ամբոխի մեծագոչ աղաղակներից՝ արագացրեց իւր քայլերը և երբ շրջեց միւս փողոցը, պատահեցաւ մի քամնելի տեսարանի:

Սանձարձակ ամբոխը բաղխում էր Պիղատոսի ապարանքի պատը, Երուսաղէմի և Հրէից խաժամուժ ամբոխը՝—աղաղակները, անտաշ կանայք, երդմնազանցները, կեղծ դրամահատները, մարդասպաններն ու յանցաւորները՝ դուրս գալով իրենց աւազականոցներից, — նրանք ամենքը բարկացկոտ աչքերով պարզել էին իրենց ձեռքերը դէպի Հռովմայեցւոց գլխաւորը և աղաղակում էին.

—Բարաբբայի՜ն, Բարաբբայի՜ն, տուր մեզ Բարաբբայի՜ն:

Պիղատոսը շրջապատուած իւր պալատականներով և քահանայապետներով՝ գլխաբաց կանգնած էր ապարանքի ծիրանագոյն սիւնազարդ սրահի մէջ տեղը: Նա հագած էր հռովմայեցւ սպիտակ վերարկու և ամբոխին ուղղում էր խօսքեր, որոնց Ցուդան լսել չկարողացաւ: Եւ ամեն անգամ, երբ հռովմայեցւոց գլխաւորը բաց էր անում իւր բերանը, այդ սոսկալի ամբոխի աղաղակներն աւելի ևս սաստկանում էին.

—Բարաբբայի՜ն, Բարաբբայի՜ն:

Ցուդան ներս խուժեց ամբոխի մէջ: Այնտեղ նա պատահեցաւ բարեկամներին, որոնք ողջունում էին նրան. մարդասպաններն ու անառակ կանայք յայտնում էին նրան իրենց մեծարանքը: Երբ նա անցաւ առաջի շարքերի միջով և մօտեցաւ ապարանքի շեմքին, նա զգաց, որ իրեն ամեն կողմից շրջապատել և տիրել է ընդհանուր կատաղութեան սարսափելի փոթորիկը. հազարաւոր սրտերից դուրս էին թռչում միայն մի ձայն, մի զարհուրելի աղաղակ.

—Խաչէ՛ր նրան, խաչէ՛ր նրան:

Պիղատոսը տխուր ու յուզուած մտաւ Ատեան. նրան հետևեց իւր շքախումբը: Միջանցքում մնաց միայն մի հարիւրապետ. նա կանգնած էր երկու սիւների մէջ և հսկում էր ամբոխին: Նրա դէմադէմ մի ծերունի օրինակաւ վեհանձն շարժուածքով և անեղային արդարութեամբ թերթում էր և մի տարօրինակ աղմուկով կարդում էր մեծ մագաղաթների գրուածքները: Ամբոխի կատաղութիւնն աստիճանաբար նուաղեց. նա դեռ կէսպով զգում էր, որ ապարանքի ներսում տեղի է ունենում մի քամնելի գործ: Ցանկարծ քահանան տեսաւ առաքեալին կարմիր թիկնոցի մէջ փաթաթուած. նա մի քանի խօսք փոփսաց հարիւրապետին, որն իւր հերթում հայեացքն ուղղել էր Իսկարիովտացու վրայ. նրա դէմքը պարզ կերպով մի զզուելի արտայայտութիւն ստացաւ և նա արագ հեռացաւ այնտեղից:

Այն ժամանակ բրոնզեայ ծանր դուռը դանդաղօրէն և հանդիսաւոր կերպով բացուեցաւ: Պիղատոսը նորից երևեցաւ ծիրանագոյն սիւնազարդ սրահի առաջ. փողոցում տիրեց մեռելային լռութիւն: Կիսաղօտ ստուերի մէջ, ստամանելով, երկու զինուորի օգնութեամբ, արեան արտասուքի կայլակներով ողողուած, գլխին փշեայ պսակ դրած, եղեգը ձեռքին, ծիրանի քղամիդը հագած, ձեռքերը կապկըպած կուրծքի վրայ, գնում էր Յիսուս՝ գլխիկոր դէպի Ատեանի ընդարձակ դահլիճը:

Անխօս ամբոխը զարմացած նայում էր այդ մօտեցող արիւնաշաղախ խոշտանդ երևոյթին: Ցուդան սարսափահար երեսը դարձրեց: Պիղատոսը առաջ անցնելով և ձեռքով, — որի վրայ փայլում էր այն մատանին, որ գործադրւում էր կայսեր հրամանները կնքելու համար,—ցոյց տուեց նազովրեցուն և բարձր ձայնով արտասանեց.

—Ահա այրը ցձեզ:

Եւ նորից թնդաց խաժամուժ ամբոխի զարհուրելի աղաղակը, էլ աւելի կատաղի, էլ աւելի հրամայական.

—Խաչէ՛ր նրան, խաչէ՛ր նրան:

Մի քանի կանայք հեծկլտում էին. մի անմիտը գրկել էր Տիբերիոսի արձանը և աղաղակում.

—Վա՜յ նրան, վա՜յ Երուսաղէմին, վա՜յ Աստծուն, վա՜յ ինձ:

Հարիւրապետը կուսակալի պահապան զօրքի գլուխն անցնելով՝ տիրելը կոմատութեամբ ցրուեց ամբոխը և այդ արխուր թափորի համար ճանապարհ մաքրեց: Ցուդան թաղնուեցաւ իւր մօտ կանգնողների յետևը, որպէս զի Յիսուսի աչքերին չերևայ. բայց Պիղատոսի զօրականներից մինը խփեց նրան իւր սրով և սաստ.

—Դու ինչու համար ես եկել. ծաղրելո՞ւ արդեօք Հրէից Մարգարէի տանջանքները, թէ՞ քո ներկայութեամբ անպատուելու Հռովմի մեծութիւնը: Մեր աստուածներն արհամարհում են դաւաճաններին: Հեռացի՛ր այստեղից, որովհետև քեզ համար միթէ առանձնացած անկիւն, ուր կարողանաս թագցնել դու քո նախատինքդ:

Խաչատուր քահ. Փանեան.

(Վերջը միւս անգամ)

հողում մաքառել անարդարութեան դէմ, մի կողմ թողնելով անձնական հանդըստութիւնը։

Գ. Ռ.

ՂՈՒԲԱ, 8 յունիսի. — Մեր անցեալ նամակում ակնարկեցինք, որ Ղուբան մեր քաղաքի եղբայրների համար իբրև յարմարագոյն ամարանոց կարող է ծառայել։ Մեր քաղաքը միայն մի պակասութիւն ունի, որ կենսական նշանակութիւն ունի և որի մասին պատուական «Նոր-Դար»ում ժամանակին մասնանիշ է արուած։ Հրաւիրելով ում անկ է ուշադրութիւնն այդ կարևոր հանգամանքի վրայ։ Այդ մաքուր ջուր չունենալու հարցն է։ Մեր այժմեան ջուրն, աւերք, առողջարար է, բայց մաքրութեան մասին նոյնը չենք կարող ասել, քանի որ անյարմար պայմանների մէջ է գտնւում։

Մօտիկ անցեալում մի խումբ քաղաքացիների մէջ, հարիւր տնուորից բաղկացած միտք է յղանում մշտական ամարանոց հաստատել Ղուբա գաւառի Ղուսար աւանում։ Ղուսարը գտնւում է Ղուբայից դէպի հիւսիս 11 վերստ հեռաւորութեան վրայ։ Նրա մօտով անցնում է Ղուսար գետը, որի ափին շինուած է մի բաւական լաւ աղբիւր, որը և գիւղացիներին մատակարարում է մաքուր, յստակ և առողջարար ջուր, միակ առաւելութիւնը, որ ունի գիւղացին ներկայումս. մնացեալ միւս յարմարութիւններով, օդի և կլիմայի վերաբերեալ եմ ասում, նա գտնւում է համարեա նոյն պայմանների մէջ, ինչ որ Ղուբան է։ Բայց Ղուբան *իբրև քաղաք*, ինչ ասել կուզի, որ մեծ առաւելութիւններ կունենայ Ղուսար *գիւղից* կենցաղավարութեան վերաբերեալ։ Եթէ մեր քաղաքի եղբայրները կամենան, շատ հեշտութեամբ և քիչ գումարով կարող են այնպիսի մաքուր և առողջարար ջուր ունենալ, որ իր տեսակի մէջ հազուագիւտ լինի։ — Բաքուեցիները ժողով են կազմում ամարանոցի հարցի վերաբերեալ խորհըրդակցելու։ Ահա այդ խորհրդում Ղուբայի և Ղուսարի ամեն օրպիսութեանց քաջ անցեալ մէկը խորհուրդ է տալիս ժողովականներին ամարանոցավայր ընտրել Ղուբան, թուելով նրա առաւելութիւնները Ղուսարից։ Ժողովականները կարծում են, որ չլինի թէ գիւղացիք մերժեն իրենց պայմանները, բայց այն անձն երաշխաւորում է, որ ինքը կարող է յաջողեցնել այդ։ Խորհուրդը համաձայնելով պարոնի ցեկուցմանը, վճռում և խողոյն հեռագրում է Ղուբա իմանալու, թէ արդեօք քաղ. վարչութիւնը համաձայն կլինի 100 տնուորի համար ամարանոցավայր յատկացնել մի յարմար գետին և ինչ պայմաններով։ Քաղաք. վարչութեան իրաւասուներն անյապաղ հրաւիրում են ժողովի։ Թեր և դէմ կարծիքներ են յայտնւում, ուղեանց-չուղեանցներ լինում։ Երկար վիճաբանութիւնից յետոյ խորհուրդը համաձայնւում է մի յարմար ամարանոցավայր յատկացնել բաքուեցիներին և իրեն համաձայնութիւնը հաղորդում է հեռագրով, յարակցելով ստանալ փոստային մանրամասն տեղեկութիւններ։ Բանակցութեան այդպիսի յաջող ելք ունենալուց յետոյ։ Բաքուեցիների կողմից ընտրւում են երեք հոգի լիազօրներ, որպէս զի նրանք անձամբ Ղուբա գալով հետազօտեն ամարանոցի տեղը և երկու կողմի պայմանների միմեանց ցեկուցանեն։ Լիազօրներն այսօր հասան Ղուբա։ Երևի շուտով կրծանօթանանք պայմանների մանրամասնութիւնների հետ և կաշխատենք ժամանակին հաղորդել։ Քաղաքացիք այդ հարցին ուրախութեամբ են վերաբերւում։

Արեգ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

ԹԵՀՐԱՆ, 4 յունիսի. — Գրեթէ 2 ամիս է, որ հայր Այվազեանը Ն. Օ. Ս. Կաթուղիկոսի հեռագրական պահանջի համեմատ՝ Թեհրանից մեկնեց Ս. Էջմիածին։

Թեհրանի ժողովուրդը նրան ձեռքից չդիտի տար, և չդիտի թողնէր որ մի քայլ անգամ քաղաքից դուրս դնէր, եթէ յուսադրուած չլինէր, որ մօտ ապագայում հայր Այվազեանը եպիսկոպոսի պաշտօնով պիտի վերադառնայ Թեհրան։

Իսկոյն այս դրութեան մէջ էին, յանկարծ հրապարակ է գալիս («Մշակ»-ի սիւնակներում) Թաւրիզի մի թղթակցի հայր Այվազեանին վերաբերեալ մի աննպաստ յօդուած։

Այս պարագան ինձ վրայ պարտք է դնում հրապարակ հանել մի քանի իրողութիւններ՝ նախ մեզ սիրելի եղած Այվազեանի արժանիքը և ապա Թաւրիզցիների երազի թեթևութիւնը ապացուցանելու։

Նախ պէտք է իմանալ, որ պարսից մայրաքաղաքի հայը Ատրպատականի կամ Ջուղայի հայու նման չէ թէ լոկ իր շահն է մտածում, այլ բոլոր պարսկահնդկահայերի եկեղեցական և ազգային շահերը իւրն իմանալով, ջանում է թեմական երկու անջատ ուժերը (Ատրպատականի և Ջուղայի) մի կենդրոնի իշխանութեան ներքոյ դնել և այդ կենդրոնը, հարկաւ, լինելով մայրաքաղաքս, այնտեղ մի հմուտ եկեղեցականի ձեռքով ղեկավարել տալ բոլոր Պարսկ-Հնդկաստանի հայերի եկեղեցական ազգային գործերը։

Ջուղայի կամ Թաւրիզի թեմերը գրտնւելով տեղական կառավարութեան անմիջական հսկողութեան տակ, շատ անգամներ ամենակարևոր խնդիրների կարգադրութեան համար նրանց ձայնը մընում է անլսելի Վ. Ճահի առաջ։ Եւ եթէ երբեք լսւում է այդ ձայնը, դա էլ լինում է այս ինչ կամ այն ինչ վաճառականի և թեմական գործակալի միջնորդով, որը չունենալով ոչ և է կրօնական իշխանութիւն ու ազդեցութիւն, նրա դիմումները լինում են աննշան և ձայնը անզօր, հետևաբար միայն խեղճ հայն է լինում միշտ տուժողը...

Այս պարագայում հաւատացած եմ, որ ամեն մի հեռատես հայ մեզ հետ միասին պիտի համոզւի, որ այսօրուան պահանջն է պարսկահայերիս հոգևոր իշխանութեան կենդրոնը դարձնել մայրաքաղաքս, նրա փոխանորդները հաստատելով Թաւրիզի և Ջուղայի թեմերի մէջ։

Այսպիսի մի կենդրոնին հարկաւոր է ունենալ մի այնպիսի հոգևոր ներկայացուցիչ, որ իր հմուտ ղեկավարութեամբը կարողանայ պարսից կառավարութեան առաջ մեծ դիրք ստեղծել։ Արդ, քանի որ հայր Այվազեանը անցեալ երեք տարիները Թեհրանում իր եռանդուն գործունէութեամբը, համակրելի բնաւորութեամբը, նախ կառավարութեան առաջ ամենակարևոր դիրք ստեղծեց իր համար և ապա անմոռանալի ժողովրդականութիւն շահեց։ Ուստի Թեհրանի հայը և ոչ մի ջանք խնայել չէ ցանկանում հայր Այվազեանին յանձնելու տեղիս եկեղեցական և ազգային բոլոր գործերի ղեկը։

Ուստի թող վերոյիշեալ Թաւրիզի թղթակիցը իր քնաթաթախ աչքերը շփելով փարատէ իր մտաւի և թեթև երազը, որի ազդեցութեան տակ նա ցանկանում է հրապարակաւ ցոյց տալ թէ Թաւրիզի հայերի համար թերևս հայր Այվազեանը մի Սատանեան պիտի ներկայանայ և այլն։

Ցեղիս հոգաբարձութիւնը, թաղականաց ընկերութիւնը, ընթերցասիրաց ընկերութիւնը և ուրիշ կարևոր մարմիններ պատրաստում են հեռագրով դիմել Ս. Էջմիածին Ն. Օծութիւնից խնդրելու, որ հայր Այվազեանին եպիսկոպոս ձեռնադրուած Թեհրան դարձնէ շատ աւելի գործերը կարգի բերելու։ Պարսկաստան եկած հոգևորականների առաջինն է Այվազեանը, որ այսքան ժողովրդականութիւն է վայելում, ուստի ինչ հարկ կայ, դէպի կղերականը ունեցած սիամեմատիքական տեսութեամբ կուրացած՝ անխնայ հարուածել և գատափետել նոյն իսկ արժանաւորին *)։

Սատուրն.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՒՍՏՐԻԱ. Պալացկու պատուին Պրագում եղած տօնախմբութիւնները գերմանական լրագրներին առիթ են տուել յարձակումներ գործելու սլաւոնների վրայ. պատճառն այն է, որ բոլոր սլաւոններն այդ տօնախմբութիւնների ժամանակ ախոյեան ձեռք ձեռքի տուած գործելու գերմանականութեան դէմ։ Ցիշեալ լրագրներին մեծ զայրոյթ է պատճառում նաև այն հանգամանքը, որ աւստրիական կառավարութիւնը բարեհաճ աչքով նայեց Պրագում սլաւոնների կայացրած միութեանը։ Սլաւոնների այդ միացումն անշուշտ հետևանք է Աւստրիայում ստացւող համակրեմա նախանութեան հասանքի, և ապացոյց՝ որ աւստրիական սլաւոնները միասիրտ նուիրուած են թագաւորող տանը։ Այդ բանում գերմանացիները ստանալիք են տեսնում իրենց դէմ, ինչպէս և այն բանում, որ Պրագի հանդէսների ժամանակ լեհացիները հաշտուեցին ռուսների հետ։

—

ԿՐԵՏԷ. — «Times»-ի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է, որ Կրետէի խնդրի վերաբերմամբ բանակցութիւններն այժմ տեղափոխուած են Լոնդոն։ — Ռուսաց, ֆրանսիական և իտալական դեսպանները Լոնդոնի արտաքին գործերի մինիստրութեան մէջ խորհրդակցում են Կրետէի օգտին անելիք մի փոխառութեան, կրգղու նոր վարչութեան և այն մասին, որ թիւրքական զօրքերը կենդրոնացնելին յայտնի տեղերում, ի նկատի ունենալով, որ այդ զօրքերի թիւը պէտք է կրճատուի։ Կրետէի ազգային ժողովի խորհրդին՝ ներքին գործերը վարելու իրաւունքներ կը տրուին։

—

ԹԻՒՐՔԻԱ. — Սև լեռան սահմանում տեղի ունեցած վերջին ընդհարումների առթիւ Սև լեռան Կ. Պոլսի ներկայացուցչի արած նոր առաջարկութիւններին սուլթանը պատասխանեց, թէ սահմանն է ուղարկուած Սաադ-էտտին փաշան, որին յանձնարարուած է վերականգնել կարգը և վարձատրել բնակիչներին նրանց հասած վնասների համար, այլև պատժել սև լեռնցիներին սահմանը վառ պահպանելուն, գաղտնի կերպով զէնք ներմուծելուն և ուրիշ զեղծումների համար։ Մի քանի պետութիւններ սուլթանին խորհուրդ են տուել ամեն հնար գործ դնել երկիրը խաղաղացնելու և ալբանացիներին զսպելու։ Բերանում արդէն կենդրոնացած է 10 զօրաբաժին։ Ալբանացիների յուզումը նստել է։

— Պետերբուրգից «N. F. Presse»-ին հաղորդում են, որ Օսման փաշան, Պլեւնայի հերոսը, այս յունիս ամսին մի ուղևորութիւն է կատարելու դէպի Եւրոպա։ Նախ կըգնայ Մոսկուա, յետոյ Պետերբուրգ և ապա արևմտեան Եւրոպայի քաղաքները։

ՍՊԱՆԻԱ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Այս պատերազմի մասին տեղեկութիւններն առհասարակ խիստ անորոշ և շատ անգամ հակասական են։ Անկասկած է միայն, որ ամերիկական նաւերը շրջում են ափերի մօտ և ամեն կերպ աշխատում են վնասել սպանիացիներին. Այս օրերս հաղորդուեց, որ նրանք ամբարկոծել են երկաթուղու զինուորական գնացքը, որ անցնում էր ափով, և Սանտ-Եագոյից ոչ հեռու ափ են հանել 300,000 փամփուշտ, 400 հրացան և 2,000 maschetes ապըստամբների համար, որոնց թիւը Սանտ-Եագոյի մօտերքը մօտ 5,000 է։

Փաքր առ փոքր յայտնւում են սպանական նաւախմբի կորուստները. սպանուած է «Reina Mercedes»-ի նաւապետը, «Vizcayn» նաւի վրայ երկու ռումբ վնասել են ածխի պահեստը։ «Terror» նաւի վիճակի մասին ոչ մի տեղեկութիւն չկայ։ Լուրեր են շրջում, թէ «Terror»-ն ուզում էր գիշերով մտնել Սամփսոնի նաւախմբին, բայց ամերիկացիներն իրենց էլէքտրական ռեֆլեկտորներով նկատեցին և ամերիկեան երեք նաւ սկսեցին հետամուտ լինել նրան. բայց «Terror»-ը կարող էր ազատուել նրանց ձեռքից, եթէ ամերիկական մի ուրիշ նաւ, «New-York»-ը, չփակէր նրա ճանապարհը։ Նոյն այդ բոպէին 1,000 ֆունտ ծանրութիւն ունեցող մի ռումբ արագութեամբ ջրասոյզ արաւ «Terror»-ին, որի վրայ 60 նաւաստի կար։

Սերվերի նաւախումբն առաջուայ պէս գտնւում է Սանտ-Եագոյում։ Ուաշինգտոնում արդէն յայտարարել են, որ եթէ Սերվերը ոչնչացնի իր նաւերը, որպէս զի դրանք ամերիկացիների ձեռքը չընկնեն, այն ժամանակ Ամերիկան Սպանիայից ոչնչացրած նաւերի արժէքին համապատասխան վարձատրութիւն կըպահանջի։

Ամերիկական զօրքերի դրութիւնը շատ էլ լաւ չէ։ Տամպում մեծ ընդհարում է տեղի ունեցել սպիտակների և սևերի մէջ։ 160 հոգի այնտեղ հիւանդ են փորլուծութեամբ. Ֆլորիդայի միւս կենդրոններում մօտ 2000 զինուոր նոյն հիւանդութիւնն են ստացել վատ ջրի և կերակրի պատճառով։ Ամերիկական նաւերի մի քանի հրամանատարներ խիստ հիւանդ են։ Կամաւոր զինուորները ծովային մինիստրութեանը շարունակ գանգատւում են տիրող անկարգութիւնների և զեղծումների համար։ Անհասարակ վատ կլիման և զինուորական վարչութեան զեղծումները երկար ժամանակ արգելք պիտի լինեն ամերիկացիներից Կուբայում կազմն պատերազմ սկսելու։

Բայց դրա փոխարէն ամերիկական «Չարլստոն» նաւն առանց որ և է դըժուարութեան տիրել է Մարիանեան կղզիներին և ամերիկական դրօշ է պարզել այդ կղզիների մայրաքաղաքում՝ Ագանում։

Այլ ևս ոչ մի յոյս չկայ, թէ ապստամբները բարեկամանան սպանիացիներին։ Ապստամբների պարագլուխ Գոմէզը գրում է գեներալ Բլանկոյին. «Դուք ներկայացնում էք վարկն ընկած և ուժասպառ մի պետութիւն, իսկ մենք, Բոլիվարի և Ուաշինգտոնի նման, կռւում ենք ամերիկական սկզբունքի համար։ Դուք ասում էք, թէ մենք միևնոյն ցեղին ենք պատկանում. ես կարծում եմ, որ կայ միայն մի ցեղ — մարդկայինը։ Միացեալ Նահանգները, Կուբայի գործին խառնուելով, մարդասիրական և քաղաքականական պարտք է կատարում։ Ես յարգանք եմ տածում միայն դէպի Միացեալ Նահանգները և Մակ-Կինլէյին ու Մայլսին շնորհակալական նամակներ եմ գրել։ Ես չեմ կարծում, թէ մեզ կարողանաք ոչնչացնել, ինչպէս նախազգուշացնում էք ինձ։ Եթէ այդպիսի բան կատարուի, այն ժամանակ պատմութիւնը կըդնի իր դատավճիռը։ Ի վերջոյ ես պէտք է կրկնեմ, որ շատ ուշ է կարծել, թէ մեր զօրքերը կըհամաձայնեն իբրար հետ»։

Ֆիլիպպեան կղզիներում դրութիւնը խիստ ծանր է։ Ապստամբները սպանիացիներից արդէն խլել են 10 թնդանօթ։ Արշիպելագոսում սպանական զինուորների թիւը հաշւում են մինչև 15,000, որոնցից մեծ մասը մնացել է Վիսայեան կղզիներում, բացի դրանից, այնտեղ կայ մօտ 2,000 կամաւոր զինուոր։ Եթէ այդ ճիշտ է, այն ժամանակ սպանիացիները կարող էին յաջողութեամբ դիմադրել ապստամբներին։

Ֆիլիպպեան կղզիներում տիրող խորհրդական խառնակութիւններն ամերիկացիները վերագրում էին սպանական վատ վարչութեանը։ Մայրիդում քիչ-շատ անգեղակ մարդիկ անհեթեթութիւն են համարում Ֆիլիպպեան կղզիներն անկախ հասարակապետութիւն դարձնելու միտքը։ Այդ արշիպելագոսը բաղկացած է բազմաթիւ կղզիներից, որոնց բնակիչները խիստ տարբերւում են իրարից ցեղով, լեզուով, կրօնով, սովորութիւններով և այլն։ «Ես, ասում է «Times»-ի թղթակիցը, 31 բարբառի մի ցուցակ ունիմ, որոնք պատկանում են նոյնքան ցեղերի. այդ ցեղերից ամենաբազմամարդըն են *վիզայի*-ները (2 միլիոն) և *թագալները* (1,250,000)։ Միակ օղակը, որ կապում է դրանց իրար հետ, դա ստարբերեայ տիրապետութիւնն է, իսկ երբ այդ տիրապետութիւնը ոչնչացնուի, այն արհեստական ամեն մի համայնական վարչութիւն ինքն իրեն խելոյն կըբաժանուի իր բաղկացուցիչ մասերի։ Փոխծովակալ Դիւէյն շարունակում է թղթակիցը անշուշտ ամենևին գաղափար չունէր քաղաքական և վարչական այն խիստ բարդ գործերի մասին, որ նա յարոյց՝ Կաւիտէում ոմբակոծելով սպանական նաւախումբը։

---

*) Հրատարակելով սոյն թղթակցութիւնը, մենք հայր Այվազեանի դէմ կամ օգտին ոչինչ չենք կարող ասել. նրան չենք ճանաչում։ Եթէ թեհրանցիները նրան են ուզում, ուրեմն նա յարմարագոյն առաջնորդն է թեհրանցիների համար, բայց Պարսկաստանի ուրիշ տեղերում եւ կան հայեր, նրանք ինչ են ուզում։

Խմբ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզի համաշխարհային ցուցահանդէսի նախագիծը կազմող յանձնաժողովը քաղաքակիրթ աշխարհի բոլոր կողմերից ստացել է ահագին քանակութեամբ ծրագրներ ու առաջարկութիւններ։ Այդ հնարագէտ առաջարկողների մէջ գտնւում են, ի միջի այլոց և ուսումնարան գնացող պատանիներ, աղջիկներ և տղաներ։ Մի ամերիկացի առաջարկում է այնտեղ կազմել Նիագարայի ջրվէժը իր բնական մեծութիւնով. մի ուրիշը Բաբելոնեան աշտարակի նախագիծն է մշակել։ Նորվեգիայի մի նաւաստի առաջարկում է հիմնելու մի ահագին ջրամբար միացած ջրանցքով Սենա գետի հետ։ Ջրամբարում կըլինին մի քանի կէտաձկներ. նա իր ծառայութիւնն է առաջարկում իբրև կէտորս և յոյս ունի, թէ դրանով մեծ գումար կըվաստակէ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի. — Յունիսի 11-ին դատարանն Անգլիժանում կախաղանի միջոցով մահուան պատժի դատապարտեց մայիսի 18-ին (Ն. տ.) առտայ բանակի վրայ յարձակում գործողներին վեց պարագլուխներին։ Յունիսի 12 ին դատավճիռը գործադրուեց։ Դատապարտեալներին կախեցին տեղացիները, ընդ ամեն տեղական բնակիչներին հրամայուած էր ներկայ լինել։ Կախելուց յետոյ, կանաչ և կարմիր դրօշակները, որոնցով Իշանը յարձակւում էր գործել, հրապարակով այրուեցան։ Այս մասին տեղեկագրելով, գեներալ Իօնովը աւելացնում է, որ նահանգում անդորրութիւն է տիրում։

ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՕ. — Չորս նաւ այսօր դուրս գնացին այստեղից դէպի Մանիլա 4,000 զօրք տանելով։

ՊԱՐԻԶ. — Այսօրվայ մինիստրութիւնը մշակել է մի յայտարարութիւն, որը կազմուած է հասարակապետական միացման ոգւով։ Մինիստրութիւնը կը յետաձգէ Դրեյֆուսի գործի վերաքննութիւնը, կը յայտարարէ, թէ կառավարութիւնը վճռել է ամփոփել յարգելու զօրքը և վճռուած գործը. յուլիսի 1-ից կըվերադառնայի հացահատիկների մաքսը և այլն։

ԼՈՆԴՈՆ. — «Morning Post»-ի Ուաշինգտոնի թղթակիցը հաղորդում է, թէ մի բարձրաստիճան անձից ինքն իմացել է, որ Անգլիայի հետ եռանդուն բանակցութիւններ են լինում, որպէս զի Կա-

մարէի նաւախմբին Թոյլ չտրուի Սուէզի ջրանցքովն անցնելու։

ՊԱՐԻԶ. — Մինիստրութիւնը վերջնականապէս կազմակերպուած է, ինչպէս որ հաղորդուած էր առաջ. բացի դրանից, սենատոր Տիլէն նշանակուած է աշխատաւորների մինիստր, Վալլէն—արտաքին գործերի մինիստրի օգնական, Մուժօ—պոստերի կառավարիչ։

ՄԱԴՐԻԴ.—Պնդում են, որ Կամարէն այսօր կըսկսի անցնել Սուէզի ջրանցքով, և թէ նա ածխի բաւական պաշար ունի։

Կառավարութիւնը չի կարծում, որ ամերիկական նաւախումբը մօտենայ Սպանիային, բայց յամենայն դէպս միջոցներ են ձեռք առնուած։

ԹԵՐ ԵՒ ԴԵՄ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Նոր-Դար»-ի 87 համարում Ձուչուց մի թղթակցութիւն էր տպուած Ամբասի վանքի այգիների պտղի վաճառման մասին, որի մէջ թղթակիցն յեղաշրջել էր ճշմարտութիւնը։ Կոնսիստորիան աւելորդ չէ համարում ճշմարտութիւնը երևան հանել և խնդրում է «Նոր-Դար»-ի խմբագրութիւնից տպագրել իր պատասխանը։ Ահա իրողութիւնը։—Այգիների վաճառման համար իրաւ աճուրդ է նշանակուել, բայց աճուրդը չի կայացել յանկացող և աճուրդին մասնակցող մրցակիցներ չներկայանալու պատճառով։ Ասափճանւոր Թ. երբէք 60 բուբլի գրաւական չի ներկայացրել։ Այգիներն աճուրդով 330 բուբլով չեն ծախուել։ Առնուագլիրը Թ.-ի ծանօթ գիւղացու հետ ոչ մի գործ չի ունեցել, փողերն ընդունելու կամ պայմանը գրելու, ուրեմն ոչ մի առիթ կամ իրաւունք ունենար անձնական շահի պատճառով նրան մերժելու։

Գրիգոր Ծատուրեան անունով մի Ձուչիքենդցի ներկայանում է Կոնսիստորիայի նախանդամ սրժ. Սահակ վարդապետին, սակարգում այգիների պտուղը 350 բուբլով, տալիս է 100 բուբլի կանխավճար Կոնսիստորիայի առենադպիրի ներկայութեամբ և խոստանում, որ մնացածն էլ տալիս 10-ին տայ և պայմանը կապուի։ Այդ միջոցներում Կոնսիստորիան կալուածական ծախքերի համար փողի կարիք ունենալով ի դէմս նախանդամ Սահակ վարդապետի կանչում է Ծատուրեանցին և առաջարկում, որ եթէ կարելի է մնացած 250 բուբ. վճարէ ժամանակից մի քանի օր առաջ, յանկարծ Ծատուրեանցը յայտնում է, որ մնացածը ոչ թէ 250 բուբլի է, այլ 230, Վարդապետը և առենադպիրը զարմացած յայտնում են, որ ախր 350 բուբլի է առաջարկած գինդ, ինչու 20 բուբլին ստում ես. գիւղացին յամառում է, թէ 330 բուբլի է խոստացածս և յայտնում է թէ՝ սուտը դուք էք. տալիս էք 330 ով տուէք, չէք տալիս՝ ես Սինոդով կառնեմ և գիտեմ թէ ինչ սեսակ կառնեմ։ Կոնսիստորիան որոշակի յայտնում է սրան, որ հանգամանքը պարզ է, 350 բուբլուն համար խօսք անգամ չի կարող լինել, եթէ ուզում ես յետ դառնալու պատճառ բռնել, մենք հակառակ չենք, յետ առացիր 100 բուբլիդ և գնա, իսկ եթէ չէ՝ մենք չենք կարող խօսածից մի կոպէկ պակասեցնել և ստիպուած կըլինենք ուրիշին տալու։ Նա չի ընդունում 100 բուբլին և ոչ էլ խոստացածն է տալիս (որ մնաց թէ 370 բուբլի) և դուրս է գնում սպառնալիքներ տալով։ Այնուհետև Կոնսիստորիան ստիպուած է լինում տալ այգիների պտուղն ուրիշի 350 բուբլի կանխիկ վճարով, որից դրուած Ծատուրեանցը բողոք է տալիս Սրբազան Սինոդին։ Գործը ինքն ըստ ինքեան պարզ է և կը պարզուի։

Անդամ Կոնսիստորիայի Կարապետ քահ. Տէր-Դանիէլեանց.

պ.պ. Առենադպրի Մ. Տէր-Սարգսեան.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.: Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Չունևորները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուագիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մտնողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուագիշերուայ համար։ Երկունքի ն ազատելը 10 ր. մինչև 50 ր.: Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Չունևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք առանց և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ

Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ. 50 ր., հասնում է Թիֆլիս առ. 8 ժ. 26 ր., մեկնում է Թիֆլիսից Բաթում առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 ժ. 47 ր.

Փոստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս եր. 6 ժ. 33 ր., մեկնում է Թիֆլիսից Բաթում եր. 7 ժ. 48 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 33 ր.

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 22 ր., մեկնում է Թիֆլիսից Բագու եր. 9 ժ. 05 ր., հասնում է Բագու օրուայ 3 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս եր. 8 ժ. 35 ր., հասնում է Թիֆլիս առ. 9 ժ. 07 ր., մեկնում է Թիֆլիսից Բագու առ. 10 ժ. 57 ր., հասնում է Բագու առ. 5 ժ. 45 րոպէին։

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մլեթում և հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.: II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.:

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 9 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկավկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.:

Վլադիկավկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.: II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Գուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.:

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 7 ժ. 25 ր.: II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.:

ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔՆԵՐ

Թիֆլիս—Մցխեթ—Գորի Բորժոմ։

ԿԱՅԱՐԱՆՆԵՐ	Գնացք № 9 *) Թիֆլ.—Մցխեթ Հասնում է	Կանգնում է	Մեկնում է
Թիֆլիս		առ.	8.20
Մցխեթ	9.16	առ.	
Գորի			
Միխայլով			
Բորժոմ			

ԿԱՅԱՐԱՆՆԵՐ	Գնացք № 11 *) Թիֆլ.—Մցխեթ Հասնում է	Կանգնում է	Մեկնում է
Թիֆլիս		օր.	5.20
Մցխեթ	6.00	եր.	
Գորի			
Միխայլով			
Բորժոմ			

ԿԱՅԱՐԱՆՆԵՐ	Գնացք № 5 Թիֆլ.—Գորի Հասնում է	Կանգնում է	Մեկնում է
Թիֆլիս		առ.	10.15
Մցխեթ	10.55	10	11.05
Գորի	12.48	օր.	
Միխայլով			
Բորժոմ			

ԿԱՅԱՐԱՆՆԵՐ	Գնացք № 7 Թիֆլ.—Բորժոմ Հասնում է	Կանգնում է	Մեկնում է
Թիֆլիս		օր.	2.30
Մցխեթ	3.10	8	3.18
Գորի	4.58	10	5.08
Միխայլով	6.29	11	6.40
Բորժոմ	7.50	եր.	

ԿԱՅԱՐԱՆՆԵՐ	Գնացք № 10 *) Մցխեթ—Թիֆլ.		
Բորժոմ			
Միխայլով			
Գորի			
Մցխեթ		առ.	10.08
Թիֆլիս	10.52	առ.	

ԿԱՅԱՐԱՆՆԵՐ	Գնացք № 12 *) Մցխեթ—Թիֆլ.		
Բորժոմ			
Միխայլով			
Գորի		եր.	
Մցխեթ	7.23	եր.	6.45
Թիֆլիս			

ԿԱՅԱՐԱՆՆԵՆ	Գնացք № 6 Գորի - Թիֆլիս		
Բորժոմ			
Միխայլով			
Գորի		եր.	7.00
Մցխեթ	8.30	10	8.40
Թիֆլիս	9.18	եր.	

ԿԱՅԱՐԱՆՆԵՐ	Գնացք № 8 Բորժոմ—Թիֆլ.		
Բորժոմ		գիշ.	1.44
Միխայլով	2.54	16	3.10
Գորի	4.33	8	4.31
Մցխեթ	6.39	8	6.47
Թիֆլիս	7.33	առ.	

*) Գնացքներ №№ 9, 10, 11, և 12 կըմեկնեն հետևեալ օրերը։

Գնացքներ №№ 11 և 12 (տօների նախորդ օրը) յունիսի 20, 24, 27. յուլիսի 18, 21, 25. օգոստոսի 1, 5, 8, 14, 22, 24 և 28. սեպտեմբեր 5, 7, 12, 19, 25 և 30. հոկտեմբեր 3 և 30։

Գնացքներ №№ 9, 10, 11 և 12 (տօն օրերը) յունիսի 21, 25, 28 և 29. յուլիսի 5, 12, 19, 22 և 26. օգոստոսի 2, 6, 9, 15, 16, 23, 25, 29 և 30. սեպտեմբերի 6, 8, 13, 14, 20, 26 և 27. հոկտեմբերի 1, 4 և 11.

Գնացքներ №№ 9 և 10 (տօների հետևեալ օրերը) յունիսի 22, 26 և 30. յուլիսի 6, 13, 20, 23 և 27. օգոստոսի 3, 7, 10, 17, 24, 26 և 30. սեպտեմբերի 7, 9, 15, 21 և 28. հոկտեմբերի 2, 5 և 12։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսից հեռանալուս պատճառով բոլոր գրքերս վաճառում եմ ՊԱԿԱՍ ԳՆԵՐՈՎ. գրավաճառները և մասնաւոր անձինք պայմանների մասին կարող են դիմել ինձ մինչև ամսիս վերջը։ Հասցէն՝ Въ Тифлисъ депо лампъ Е. Цатурова.

Ս. Քամալեանց

(1056) 2—1.

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

ՁԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

(Խաչատուր Աբովեանի երկերի առթիւ)

Հեղինակին դիմողները (Ներսիսեան դպրանոց) ճանապարհածախք չեն վճարում։

Գինն է 30 կոպ.:

(1030) 20—16

Լոյս տեսաւ

ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ԵՒ

ՄԵՔԵՆԱՆԵՐ

բացատրական բառարանով և 250 նկարով։

Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան.

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ։

Դիմել՝ Тифлисъ, Общество изданія армянскихъ книгъ.

(1004) 50—20

Լոյս տեսաւ

ՀՐԱՏ. ԸՆԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉԻ

ՅՈ ԵՐԹԱՍ

(QUO VADIS)

Վէպը, Ներոնի ժամանակից։ Լեհերէնից թարգմ.

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ։

(742 մեծադիր երես)

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

Դիմել՝ ТИФЛИСЪ, Армянское Издательское Общество.

(2001) 50—25

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԱՃՈՒՐԴ Առենի մէջ նշանակուած է 24-ն սոյն յունիսի, առանց կրկնաճրդի, կապալաւ տալու Էջմիածնի տունը իւր խանութներով, որ գտնւում է Պուշկինեան փողոցի վրայ։ Աճուրդին մասնակցողները պէտք է ներկայանան գրաւական. իսկ պայմանների մասին կարող են տեղեկանալ կոնսիստորիայի դիւանատանը։

Անդամ կոնսիստորիայի՝ Թաթէոս վարդապետ.

(1057) 3—1.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Լոյս է տեսել «ԲՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ» երրորդ հայնագրութեամբ, որ յարմարեցրած է դաշնամուրի վրայ նուագելու և երգելու համար։ «Բնարիկը» պարունակում է իւր մէջ 27 հատ մանկական ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որ ս. Էջմիածնի նախկին ուսումնական ժողովի կողմից ընդունուած է ի շարս լաւագոյն դասագրքերի։ Արտասահմանի հայ դպրոցների խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս գիւրամատչելի եղանակով կազմուած երգարանի վրայ, որ վաճառւում է Թիֆլիսի «Կենտրոնական գրավաճառանոցում», պ. Յովհ. Սուգանեանի երաժշտ. մագազինում և ինձ մօտ։ Ինձ դիմողները բացի մեծ գնումից, նաև ճանապարհածախք չեն վճարում։ Հատով 1 ռ. 50 կոպ., 50 օր. 1 ռ. 20 կոպ., 100-ով գնողներին՝ 1 ռ.: Ցանկացողները պիտի դիմեն այս հասցէով՝ «Սիմֆերոպոլ—Ղազարոս քահ. Յովսէփեանց»։ (1038) 50—16

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկ, կիսաօթօշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է գիմնազիաների, կադետների կորպուսի, զեմլեմերների, ռէալական և այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաներ ընդունւում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած։ Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն աւարտած մանկավարժներ, գիմնազիական ուսուցիչներ։ Առանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց և վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց և ընդհանուր), բնական գիտութիւն, նըկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն։ Ուսումնարանում կայ ամեն օր գերմանական և ֆրանսիական լեզուների պրակտիկա։

Հասցէն՝ ТИФЛИСЪ Гановская ул., № 11. 3-րդ գիմնազիայի մօտ։

(1040) 10—9

Дозв. цензурою. Тифлисъ, іюня 17-го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12